

ակնյայտնի թելադրութիւնն է խելացի Աղոտին, որ հակառակ շարամիտներու, ազգի եւ ակթոռի անունով խժբժողներու, ոչ միայն յաջողցուցած էր Աթոռներու բաժանման ծրագիրը, այլ արդեամբ ալ հաստատած էր իր ծրագրին օգտակարութիւնը: Շատ հաւանական է որ Հայոց Աթոռիկոսը այս կանոնական հանգիսաւոր յայտարարութիւններն բրաւ նախանձոտներու ոչինչ ու նպատակաւոր շնչիւններուն միանգամայն վերջ տալու համար:

Հաննէ իր հիացումն ու երախտագիտութիւնը յայտնելու համար այս Ռեփորթ պատրիարքին, ամէնէն գողարիկ տողեր նուիրած է, որոց մէջ եթէ ոչ հարթ լեզուի մը, գոնէ յորդղացումներու հոսանքը կը զգաս:

#### Կ Ա Լ Ո Տ Թ Ի Ն Ո Ղ

Աղոտի պատրիարքութեան միջոցը բարդ խնդիրներու հիւսուածք մ'եղաւ: Պոլսոյ եւ Երուսաղէմի Աթոռներուն բարեկարգութիւնը, Աթոռիկոսութեան խնդիրը, որ իր նախորդներու ժամանակէն կը յուզէր մանաւանդ Պոլսոյ եկեղեցիները. խնդիր մը՝ որուն լուծումը սխալեցան հալածանքի մէջ գտնելով, պարսկահայ գերիներու ազատագրութիւնը, ասոնք կարծես բաւական չէին պատրիարք մը զբաղեցընելու, մեծ հրդեհներ ալ եկան աննկուն Աղոտին անունը միացընելու մեծ շինութիւններու հետ:

Վարդանի պէս Շինու վարդապետի մը շինութիւններուն հանդէպ, Եկեղեցւոյ նիւթական շէնքերուն ալ հմտացած էր արդէն Աղոտ, Շըղթայակրին հետ. որոնք իրենց ձեռնհասութիւնն ապացուցին Ս. Կարապետը վերաշինելով սոսկալի երկրաշարժէն ետքը<sup>1</sup>:

<sup>1</sup> Աղոտ կը պատմէ թէ, երբ իրենք Ս. Կարապետի նորոգութեամբ զբաղած էին 1706ին Ամրտոլի «գասատան»,